

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ
ՀՈԳԵՎՈՐ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ 1909-1914 ԹԹ.**

Վահագն Հարությունյան

Ադանայի 1909 թ. զարհուրելի դեպքերի ժամանակ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը մեծ դժվարությամբ վերապրեց ողջակիզման, բռնությունների ու հալածանքների ահասարսուռ մի ժամանակաշրջան, որն ամեն քայլափոխի ուղեկցվում էր մահմեդական անհանդուրժողականության և կրոնական մոլեռանդության բացահայտ դրսևորումներով: Կոտորածների ընթացքում անդառնալի կորուստներ կրեց հատկապես եկեղեցական կյանքը:

1909 թ. իրադարձությունները ծանր հետևանքներ թողեցին կոտորածներից մի կերպ փրկված հայ հոգևորականության գոյապահպանության վրա, քանի որ նրանցից շատերը հայտնվել էին նյութական անդառնալի վիճակում և ոչնչով չէին տարբերվում սովորական գաղթականներից: Հոգևորականությանն օժանդակելու և նրանց աշխատանքով ապահովելու խնդրին էր միտված Սահակ Բ կաթողիկոսի՝ Ամենայն հայոց կաթողիկոս Մ. Իզմիրլյանին ուղղված 1909 թ. նոյեմբերի 22-ի թիվ 2435 նամակը¹:

Կոտորածներից հետո կյանքը նահանգում շարունակվեց իր հին ընթացքով: Կիլիկիա հայությունը նորից վերադարձավ իր խաղաղ, ստեղծագործ աշխատանքին՝ փորձելով դարմանել իր վերքերը և լավատեսությամբ սպասել իրադարձությունների հետագա զարգացումներին: Առժամանակ մնալով Ադանայում Սահակ Բ կաթողիկոս Խապայանը աշխատեց օգնել և մխիթարել իր հոտին: Նա այցելեց ավերածությունների ենթարկված բոլոր քաղաքներն ու գյուղերը և գրեթե 8 ամիս շրջագայելուց հետո միայն կարողացավ նորից հետ վերադառնալ կաթողիկոսական նստավայր՝ Սիս:

Այդ ժամանակաշրջանում էր, որ իշխանությունները կոտորածների մեղավորներին հայտնաբերելու նպատակով հալածանքներ սկսեցին նաև հայ հոգևորականության նկատմամբ: Կ. Պոլսի պատրիարք Ե. Դու-

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1850, թ. 2 շրջ. – 3:

րյանն 1909թ. դեկտեմբերի 31-ի իր նամակում՝ ուղղված կաթողիկոս Մ. Իզմիրլյանին տեղեկացնում էր, որ Ադանայի պատերազմական ատյանները բանտարկում և դատապարտում էին նույնիսկ եկեղեցականներին՝ Ազգային գործիչների հետ բանտարկվեցին նաև Ջեյթունի առաջնորդ՝ Վաղարշակ վրդ. Արշակունին, Հաճընի առաջնորդ Ներսես վրդ. Դանիելյանն՝ իբրև «գրգռիչ ատենախօսութիւններ ընող»² և Դյորտ-Յոլի առաջնորդական փոխանորդ՝ տեր Տեր Սահակ քահանան միայն այն բանի համար, որ նրանք հանդգնել էին պայմանավորվածություններ ձեռք բերել Ջեյթունի, Հաճընի, Չոք-Մարզվանի և լեռնային մյուս շրջանների մահմեդական ազգաբնակչության հետ հայկական գյուղերին վնաս չհասցնելու համար, որով իշխանություններին «շատ ավտորժ չէին պատճառած»³: Ձերբակալության առիթով Սահակ Բ Խապայանն իր խիստ դժգոհությունն ու բողոքն է հայտնում իշխանություններին՝ նրանց կըշտամբելով, որ եթե հոգևորականներն «ըմբոստ եւ ժողովուրդը ապստամբեցնող են, ուրեմն կը նշանակէ թէ ես ալ ապստամբապետ մըն եմ...Ուստի թող ինձմէ առնուի կայսերական ֆերմանը եւ ես ալ դատուիմ իբր ըմբոստ...»⁴: Կաթողիկոսի դժգոհությունը տալիս է իր արդյունքը և հոգևորականներին ազատ են արձակվում:

Եկեղեցական կյանքի կարգավորման խնդրին էր միտված կաթողիկոսությանը պատկանող Թլանի ազարակի վիճահարույց հարցը, որը Սահակ Բ կաթողիկոսի Արդարության և կրոնի նախարարության միջոցով Բարձր Դռանը ներկայացված բազմաթիվ խնդիրներից ամենակարևորն էր:

Թլանը Անարզաբայի մեջ 100000 տոնիմ⁵ տարածությամբ մի ազարակ էր՝ իր ընդարձակ մարգագետիններով, գետակներով, ջրաղացով և հանդիսանում էր վանքի ու միաբանության եկամտի միակ աղբյուրը: Թեև հին ժամանակներում ազարակը պատկանել էր վանքին, սակայն հնարավոր չէր եղել ձեռք բերել Թլանի «սենետ» (սեփական թուղթ), որի արդյունքում այն դարձել էր ոտնձգությունների առարկա: Թեև իշխանությունները

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 14, թ. 2:

² ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 14, թ. 8 շրջ.:

³ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 668, թ. 9:

⁴ Ատանայի հայոց պատմություն, Անթիլիաս, 1970, էջ 305:

⁵ Դյոնյումը թուրքական չափի միավոր է: 1 դյոնյումը = է՝ 940 մ²: St' u Redhouse Yeni. *Türkçe-İngilizce sözlük, New redhouse. Turkish-English dictionary*, Istanbul, 1968, p. 311.

անորոշ կերպով խոստանում էին «օրինական ու արդար կարգադրութիւն մը պիտի վճռուի», սակայն 1878 թ. ռուս-թուրքական և 1897 թ. թուրք-հունական պատերազմներից հետո մեծացան խոսակցություններն այդ տարածքում թուրք մուհաջիրներ բնակեցնելու մասին և շուտով նախարարների խորհրդի որոշումը վավերացվեց կայսերական իրադեով¹:

Թլանի ազարակի հարցը կարգավորելու համար Սահակ կաթողիկոսը միաբանության ավագ անդամներով մեկնում է Ադանա՝ հայասեր տրամադրություններով աչքի ընկնող Պահրի փաշայի մոտ: Միաժամանակ նա թախանձագին խնդրագիր և բողոք է ներկայացնում Բարձր Դռանը, Սատրազամին, Ներքին գործերի նախարարին և անգամ սուլթանի աղոթասաց հալեպցի արաբ կրոնավոր՝ Աբուլիլային:

3-4 ամիս պայքարելուց հետո Պահրի փաշայի կողմից լուր է ստացվում կայսերական իրադեով հաստատուած Նախարարների խորհրդի որոշումը «Թլան Ազարակին վրա ո՛չ իսլամ ոչ ալ իսլամ-չեղող-ղայրի-միսլիմ-գաղթական չբնակեցնելու մասին»²:

1910 թ. սկզբներին Ջեմալ բեյը, որն Առաջին աշխարհամարտի տարիներին ստանձնում է Օսմանյան Թուրքիայի ծովային նախարարի պաշտոնը, նշանակվում է Ադանայի կուսակալ³: Այդ շրջանում բարեկամական հարաբերություններ են հաստատվում Ս.Խապայանի և Ջեմալ բեյի միջև: Դեռևս 1909 թ. փետրվարին Ս. Խապայանը դիմել էր թուրքական իշխանություններին՝ Կիրակոս եպս. Բեքմեզճյանի և Մկրտիչ կաթողիկոս Քեֆսիզյանի անունով գրանցված վանքապատկան կալվածքներն իր անունով դարձնելու և Թլանի ազարակի մեջ թուրք գաղթականներ հաստատելու կառավարական որոշումը չեղարկելու պահանջով: Ջեմալի միջամտությամբ էր, որ չեղարկվեց Թլանի մասին որոշումը, իսկ Մ. Քեֆսիզյան կաթողիկոսի բեհեսնիցի ժառանգորդներն էլ 300 ոսկու դիմաց Սահակ կաթողիկոսի անունով փոխանցեցին Մ. Քեֆսիզյանի կալվածքների իրավունքը:

¹ Ատանայի Հայոց պատմութիւն, էջ 293:

² Ատանայի Հայոց պատմութիւն, էջ 294:

³ Ըստ Ջեմալ Փաշայի վկայության, նա Ադանայի նահանգապետ է նշանակվել 1909 թ. օգոստոսի կեսերին, տե՛ս Записки Джемаль Паши. 1913-1919, Тифлис, 1923, с. 210: Սակայն կան տեղեկություններ նաև այն մասին, որ նա նահանգապետ է դարձել 1910 սկզբներին, տե՛ս Բարզէն Ա Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441 էն մինչեւ մեր օրերը), Անթիլիաս-Լիբանան, 1939, էջ 911:

Ժամանակի ընթացքում Սսի կաթողիկոսությունը Թլանի ագարակի պատճառով նյութական մեծ կորուստներ էր կրել, քանի որ վանքի եկամտի գլխավոր աղբյուրը հենց այդ ագարակն էր, որի գործավոր հայ մշակներին սրախողխող անելուց զատ, մահմեդական ավարառուները քշել-տարել էին ագարակի կովերն ու գոմեշները, ապա հրդեհել տարածքի շինությունները: Զրկված լինելով Թլանի եկամտի հիմնական աղբյուրից հնարավորություն չունենալով պահելու Սսի Ժառանգավորաց դպրոցը, Սահակ կաթողիկոսը ստիպված փակում է այն և արձակում ուսանողներին¹:

Թեև մինչև 1915 թ. կառավարությունը որևէ գաղթական չի տեղավորում Թլանի մեջ, սակայն կաթողիկոսին էլ չեն հանձնում ագարակի կալվածաթուղթը: Իշխանությունները «մտավախություն» ունեին, որ Սահակ Բ Խապայանը Մ. Քեֆսիզյանի նման իբր ցանկանում էր լեռնաբնակ հայերին բնակեցնել Թլանի ագարակում և Անավարզայի կայսերական ագարակի՝ «Անավարզա Չիֆթլիքի հյումայուն» հարևանությամբ հաստատել հայաբնակ կենտրոններ: Իսկ արդեն 1922 թ. Կիլիկիայի դատարկումից հետո, Թլանը վերջնականապես միացվեց Անավարզայի կայսերական ագարակին և բնակեցվեցին մահմեդական գաղթականներով:

1911 թ. երաշտի տարի էր Կիլիկիայում: Սովի ուրվականը, որը տևեց մինչև նույն թվականի դեկտեմբերը, մղձավանջի պես «կը լլկեր հոգիները»²: Աստուծո գթությունը հայցելու համար սսեցիները դիմեցին ավանդական սովորությունների: Նախ, Ժողովուրդից այլուր հավաքելով ճանապարհների եզերքին հաց պատրաստեցին և պանդուխտներին բաժանեցին: Ապա գետին պառկեցրին սբ. Աստվածածին եկեղեցու մարմարե կոթողը, որի վրա պահպանվել էր «ս. Կոստանդին» արձանագրությունը: Այնուհետև, եղեգների ծայրերին պաճուճապատանքներ պատրաստեցին և «պոտի, պոտի, անան նէտէն էօ՛լտի, պիր գաշըճաք սուտան էօ՛լտի, վէր Ալլաըմ վէր՝ սուլո՛ւ սուլո՛ւ եաղմո՛ւր» բացականչություններով պտտվեցին փողոցից-փողոց, որի ընթացքում ամեն տնից ջուր էր ցողվում պաճուճանքներին: Թուրքերն էլ գործի դրեցին իրենց սովորությունը. կանաչ-կարմիր դրոշակներով և երկար ձողի վրա ամրացված գան-

¹ Սիմոնյան Հ., Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ), Երևան, 2009, էջ 146:

² Քելեշեան Մ., Սիս-Մատեան. պատմական, բանասիրական, տեղագրական, ազգագրական եւ յարակից պարագաներ, Պեյրուֆ, 1949, էջ 526:

գով նրանք «հոճանների» և ժողովրդի թափորով արաբերեն բարձրաձայն երգերով ու աղոթքներով անցան քաղաքի մի ծայրից մյուսը և ջուր ցողեցին, սակայն դարձյալ անարդյունք:

Այս անգամ թուրքական ճարահատյալ պատվիրակությունը հայ երևելիների մասնակցությամբ դիմեց Սահակ Բ կաթողիկոսին ջրօրհների արարողություն կատարելու արտոնությամբ: Նույն օրը «Գլխար Օյնաղը» վայրում հայ և թուրք ժողովուրդների մասնակցությամբ կատարվեց ջրօրհների արարողություն և ինչպես Մ. Քելեշյանն է նշում «արարողութիւն չլրացած Չէօրթին վրան սեւ ամպերը խտացան, կաթիլները սկսան թափիլ, ժողովորդուն ալ աճապարեց՝ իբրև հետեւանք Աստուծոյ գթասիրութեան»¹: Բոլորն ուրախ էին, որ Հայ Առաքելական եկեղեցու առատաբեր օրհնությունը տարածվեց երկրի վրա՝ առանց ազգի և կրոնի խտրության: Մինչև 1920 թ. Կիլիկիո կաթողիկոսությունը նույն վայրում կատարում էր ջրօրհների արարողություն:

1909-1914 թթ. վերականգնվեց **հոգևոր-եկեղեցական կյանքը**, կատարվեցին վարչա-կրոնական փոփոխություններ և որոշվեց նշանակել թեմական նոր առաջնորդներ: 1910 թ. աշնանը Սահակ Բ կաթողիկոսը՝ որպես կաթողիկոսական փոխանորդ Ադանա է ուղարկում Ներսես ծ. վրդ. Դանիելյանին: 1911 թ. մայիսին Ադանայի Գավառական ժողովի 42 անդամներից 38-ը հոգևոր-թեմական առաջնորդ են ընտրում արմաշական Շահե ծ. վրդ. Գասպարյանին, որը 1905-1907 թթ. եղել էր Մերսինի առաջնորդական փոխանորդը²:

Կոտորածներից հետո Սահակ Իսապայանը 1912 թ. հունիսի 12-ին Հաճընի ս. Գևորգ եկեղեցում Պետրոս Սարաճյան վարդապետին շնորհում է գավազանի և ծայրագույն վարդապետի աստիճանները: Այնուհետև նա այցելում է Ջեյթուն: Այդ ժամանակ էր, որ Պետրոս Սարաճյանի ջանքերով Հաճնի ս. Աստվածածին եկեղեցուն կից հիմնեց փառավոր Աղջկանց վարժարանը, որի համար հաճընցիների և Որբախնամ հանձնաժողովի կող-

¹ Քելեշյան Մ., Սիս-Մատեան. պատմական, բանասիրական, տեղագրական, ազգագրական եւ յարակից պարագաներ, էջ 527:

² 1913 թ. Շահե ծ. վրդ. Գասպարյանը Պողոս Նուբար փաշայի կրթաթոշակով մեկնում է Ամերիկա աստվածաբանական բարձրագույն կրթություն ստանալու համար, իսկ 1930-1935 թթ. ստանձնում է Անթիլիասի Դպրեվանքի վերատեսչի պաշտոնը: Տե՛ս Առաջնայի Հայոց պատմութիւն, էջ 306:

մից հանգանակվեց 1750 օսմանյան ոսկի: Շինարարությունը տևեց մեկ ու կես տարի, և ավարտվեց 1914 թ. վերջին: Յոթ հարկանի շինությունն ի հիշատակ գրերի գյուտին ստացավ Սահակ-Մեսրոպյան անունը¹:

Կաթողիկոսության և Ադանայի թուրքական իշխանությունների միջև հարաբերությունները նորից սրվում են այն բանից հետո, երբ 1911 թ. մայիսին կուսակալ Ջեմալ փաշան տեղափոխվում է Բաղդադ, իսկ նրա փոխարեն նոր նահանգապետ է նշանակվում ծագումով չերքեզ՝ Ռումելցի Ձիկան Մուամմերը, որը մինչ այդ Կեսարիայի մյութեսարիֆն էր, իսկ ապա Կոնիայի վալին: Նրա օրոք սրվում են հարաբերությունները նահանգապետի և Հաճընի առաջնորդ Ներսես վրդ. Դանիելյանի միջև: Վերջինս չհանդուրժելով նահանգապետի հողային և դատական չարաշահումները սուր քննադատության է ենթարկում նրան, որին Մուամմերը Ադանայի առաջնորդարանի դիվանապետի միջոցով պատասխանում է. «Խորհուրդս տուր ձեր կրօնապետին, որ թե՛ իր թե՛ իմ դիրքս կը պահանջէ որ ամէն խնդրոյ համար, ո՛չ թէ խիստ եւ ամուր՝ այլ կակուղ եւ սակաւ խօսի. հետեւանքը անբաղձալի ուղղութեան մը կրնայ երթալ...»²:

Նահանգապետի և կաթողիկոսության հարաբերությունները ոչնչով չբարելավվեցին նաև հետագա տարիներին: Միհրան էֆենդի Գարակյոզյանին գրած իր 1911 թ. դեկտեմբերի 13-ի նամակում Սահակ Բ խոստովանում էր. «Այն սև ու կարմիր օրերէն շուրջ երեք տարիներ անցան և մենք տակաւին աչք յ'արտասուս և վրդովեալ հոգւով կը թափառինք իբր ստուեր անմխիթար՝ աւերակաց և մշտնջենաւոր սուգի այս երկրին – Կիլիկիոյ – մէջ, ուր նախճիրներէն վերապրածները կեանքէ աւելի գերեզմանը կը պատկերացընեն, ուր Եկեղեցիներն ու Սրբավայրերը կամ կործանած են հրոյ ճարակ, կամ խրթնացած են իրենց բեմերու պայծառութենէն՝ առանց պաշտօնէի ու դատարկ, ուր չը հնչեր տառապեալներու Աստուծոյն Աւետարանին մխիթարիչ ձայնը... ուր՝ Որբանոցներէն դուրս, դեռ բիւրաւոր անպաշտպան, ընտանեզուրկ որբերու և որբուհիներու երամներ վի-

¹ Բաբգէն Ա Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441 էն մինչեւ մեր օրերը), էջ 912:

² 1915 թ.,երբ Ներսես վրդ. Դանիելյանը Եոզղաթի առաջնորդն էր, դեպի Սեբաստիա աքսորի ճանապարհին Մուամմերի վրեժխնդիր ցուցմունքով սրախողխող է լինում: Տե՛ս Ատանայի Հայոց պատմութիւն, էջ 307:

րաւոր թռչնոց նման կը թափառին փողոցներու և աղբյուներու մէջ...»¹:

1912-1913 թթ. բալկանյան պատերազմները նոր էին սկսել Ռումելիի ռազմաճակատում, երբ Ռումելիի Ձիկան Մուամների հրահանգով Ադանայի նահանգում քրիստոնյա ազգաբնակչության նկատմամբ սկիզբ առան նոր սպառնալիքներ: Հայերի տների դռների վրա պատկերվում էին արյունով խաչեր, իսկ պատերին գրվում էին սպառնալից բառեր: Կաթողիկոսարանի բողոքների հիման վրա կուսակալն անձամբ ոստիկանական և ժանդարմական զորքերի հրամանատարների հետ միասին Առաջնորդարանում հանդիպում է Սահակ Բ Խապայանին առաջարկելով իր օգնությունը. «Ահա՛ թուղթ ու գրիչ ձեռքիս մէջ. ի՛նչ որ կը պահանջէք՝ հրաման ըրեք, այստեղ պիտի նշանակեմ ու գործադրել տամ»: Սակայն վեհափառը պատասխանում է. «Ո՛չ պատշաճ է, ո՛չ ալ տրամաբանական՝ մեր կողմէ միջոցներ առաջարկել ու թելադրութիւններ ընել: Բաւական է որ ձերդ Վսեմութիւնը զիս ապահովցնէ թէ այս տեսակ սպառնական եւ հանրային անդորրութիւնը խանգարող գրգռութիւններ պիտի չպատահին այլեւս, որպէսզի ես ալ ահարեկումի մատնուած ժողովուրդս ապահովեցնեմ»²:

1912 թ. Հաճընի կայմական նշանակված «Պալլքէսիրցի Գառնիկ Ֆիքրի Պէյ»-ի Գառնիկ Վրթանեսյանի պաշտոնավարման օրոք 1913 թ. փետրվարին Օսմանյան բանակի դասալիք մի խումբ հայ զինվորներ, խուսափելով զինվորական իշխանությունների հետապնդումներից, գրավում են Հաճընի Ազգային վարժարանի շենքը, սակայն հարձակման ենթարկվելով փախչում են: Շրջակայքի մահմեդական գյուղերն օգտագործելով պատրվակը բողոքագրեր են ուղղում Սսի կառավարչին Ադանայի կուսակալին, որ իբր «հայ չէթէներու դէմ պաշտպանութիւն կը խնդրէն»: Ադանայի կուսակալ Ալի Էմին բեյը դիմում է Սահակ Բ-ին, որպէսզի վերջինս կոչով դիմի Հաճընի հայությանը և տեղի առաջնորդ՝ Պետրոս ծ. վրդ. Սարաճյանին դասալիքներին ապաստան չտալու համար, քանի որ նրանք «իրենց հակապետական գործունէութեանց խարխիս կրնան դարձնել լեռնային Կիլիկիոյ շրջանները...»³:

Հայտնի է, որ 1912-1914 թթ. հայկական հարցի վերաբացման շրջա-

¹ Կիլիկեան կսկիծներ. վաւերագրեր Կիլիկիոյ կաթողիկոսական դիւանէն 1903-1915, Պէյրութ, 1927, էջ 97:

² Ատանայի Հայոց պատմութիւն, էջ 308:

³ Ատանայի Հայոց պատմութիւն, էջ 309:

նում, Փարիզում հրավիրված Արտաքին գործերի նախարարների ժողովը վերածվեց դեսպանների ժողովի և 1913 թ. դեկտեմբերից մինչև 1914 թ. մայիս քննարկեց հայաբնակ 6 նահանգներից 2 շրջանների բարենորոգումների ծրագիրը: 1914 թ. գարնանը Կիլիկիայի Մերսին նավահանգրստում էր խարսխվել գերմանական մի ռազմանավ, որի ծովակալ (ապա՝ ամիրալ) Սոխոն Երուսաղեմից ծանոթ էր Սահակ Բ-ին: Հանդիպելով կաթողիկոսին նա առաջարկում է դիմել Փարիզի ժողովին և պահանջել, որ պեսզի Կիլիկիայի շրջանն էլ՝ որպես երրորդ շրջան, ընդգրկվի բարենորոգումների ծրագրի մեջ: Նա կաթողիկոսին վստահեցնում էր, որ Գերմանիան կպաշտպանի հայերի պահանջը: Այդ առիթով Սահակ Բ անմիջապես տեղեկացնում է Պողոս Նուբարի Ազգային պատվիրակությանը: Դեմ լինելով այդպիսի առաջարկին նա զգուշանում է, որ «Կիլիկիան Օսմանեան պետութեան աչքին կասկածելի դարձել է...»¹: Պողոս Նուբարն իր պատասխան նամակում հավանության է արժանացնում Սահակ Բ-ի զգուշավորությունը:

1914 թ. մայիսի 1-ին կատարում է եպիսկոպոսական նոր ձեռնադրություն: Այս անգամ նա եպիսկոպոս է ձեռնադրում Հաճընի առաջնորդ Պետրոս վրդ. Սարաճյանին և իր անձնական քարտուղար Գյուտ վրդ. Մխիթարյանին, որի մասին տեղյակ է պահում Ազգային պատրիարքարանին²:

1915 թ. նախատեսվում էր Ժառանգավորաց վարժարանը վերաբացել՝ կրթված քահանաներ պատրաստելու համար: Սակայն այդ ցանկությունը չիրականացավ քաղաքական նոր իրավիճակի սրմամբ:

Այսպիսով, Սսի կաթողիկոսությունը Ադանայի կոտորածից հետո շուրջ հինգ տարի անց միայն կարողանում է մասամբ ոտքի կանգնել և զարկ տալ բարենորոգչական և շինարարական որոշ աշխատանքներին: Սակայն վրա հասած Առաջին աշխարհամարտը գահավեժ փոխում է դեպքերի հետագա ընթացքը:

Բանալի բառեր - Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսություն, Սահակ Բ Խապայան, Ադանա, Թլանի ագարակ, կիլիկիահայություն, հոգևոր-եկեղեցական կյանք:

¹ Ատանայի Հայոց պատմություն, էջ 310:

² Բաբգէն Ա Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, Պատմություն կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441 էն մինչեւ մեր օրերը), էջ 912:

ДУХОВНО-ЦЕРКОВНАЯ ЖИЗНЬ КАТОЛИКОСАТА ВЕЛИКОГО ДОМА КИЛИКИИ В 1909-1914 ГГ.

Vahagn Harutyunyan

Ключевые слова: *Католикосат Великого Дома Киликии, Саак II Хапаян, Адана, Тланская ферма, Киликийские армяне, духовно-церковная жизнь.*

Католикосат Великого Дома Киликии понес безвозвратные потери во время бойни в Адане в 1909 году. События 1909 года серьезно повлияли на выживание армянского духовенства, которое каким-то образом пережило резню и оказалось в плохом финансовом состоянии, ничем не отличаясь от обычных иммигрантов. Именно в этот период турецкие власти начали преследование армянского духовенства с целью найти виновных в массовых убийствах. Процессы нормализации духовно-церковных отношений, спорный вопрос принадлежности Тланской фермы к Католикосату и назначение новых епархиальных руководителей в 1909-1914 гг. были направлены на восстановление авторитета Католикосата.

THE SPIRITUAL-CHURCH LIFE OF THE CATHOLICOSATE OF THE GREAT HOUSE OF CILICIA DURING 1909-1914

Vahagn Harutyunyan

Keywords: *Catholicosate of the Great House of Cilicia, Sahak II Khapayan, Adana, Tlan farm, Armenians of Cilicia, spiritual-church life.*

The Catholicosate of the Great House of Cilicia had irreversible losses during the massacres of Adana in 1909. The events of 1909 had a severe impact on the Armenian clergy's survival, who somehow endured the massacres and found themselves in poor financial condition, being in no way different from ordinary immigrants. During that period, the Turkish authorities began persecuting the Armenian clergy to find the slaughter's perpetrators. The processes of normalization of spiritual-church relations, the controversial issue of the Tlan farm belonging to the Catholicosate, and the appointment of new diocesan leaders during 1909-1914 were aimed at restoring the authority of the Catholicosate.